ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 35

«13» 05 2022 թ.

ք. Երևան

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՇԱՅԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի դատախազության ավագ դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Տաթևիկ Սաշայի Ղուկասյանը 2017 թվականի օգոստոսի 17-ից աշխատում է ՀՀ դատախազության համակարգում, նախ՝ Կոտայքի մարզի դատախազության դատախազի, 2020 թվականի մարտի 11-ից՝ նույն դատախազության ավագ դատախազի պաշտոնում:

Տաթևիկ Ղուկասյանը հսկողություն է իրականացնում նախապատրաստված նյութերով և հարուցված քրեական գործերով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ, այնուհետև այդ քրեական գործերով պաշտպանում է մեղադրանքը դատարանում: Իր դատավարական ղեկավարման ներքո քննված քրեական գործերով օրենքով սահմանված ժամկետում և կարգով ստուգում է դատավճիռների և որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը, կազմում եզրակացություններ, բողոքարկում է դատարանի օրինական ուժի մեջ չմտած անօրինական դատավճիռները և որոշումները, մասնակցում է բողոքների քննարկմանը: Քննարկում է անձանց և կազմակերպությունների կողմից ներկայացված դիմումներն ու բողոքները, իրականացնում քաղաքացիների ընդունելություն՝ դատախազության կանոնակարգով սահմանված կարգով:

Տաթևիկ Ղուկասյանը հսկողություն է իրականացնում հիմնականում մարդու և սեփականության դեմ, հասարակական անվտանգության, հասարակական կարգի և բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններով հարուցված քրեական գործերով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ, այդ գործերով դատարաններում պաշտպանում է մեղադրանքը:

2020 թվականի հոկտեմբեր ամսից մինչ օրս Տաթևիկ Ղուկասյանը դատավարական ղեկավարում է իրականացրել 312 քրեական գործերի նախաքննության նկատմամբ: Մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկել 30 քրեական գործ: Նշված ժամանակահատվածում դատարանում մեղադրանքը պաշտպանել է 39 քրեական գործերով, որոնցից 24 քրեական գործերով քննությունը դատարանում շարունակվում է: Նշված գործերից մեկով կայացվել է արդարացման դատավճիռ, մեկ քրեական գործով մեղսագրվող արարքը վերաորակվել է և քրեական գործի վարույթը կարճվել ոչ

արդարացնող հիմքով: Նշված դատավճիռների դեմ բերել է 2 վերաքննիչ բողոք, որոնք գտնվում են քննության փուլում: Նշված ժամանակահատվածում 62 քրեական գործով վարույթը կարճվել է, 9 քրեական գործ ուղարկվել է այլ մարմին, 123 քրեական գործով վարույթը կասեցվել է, 42 քրեական գործ միացվել է, իսկ 40 քրեական գործով նախաքննությունը գտնվում է ընթացքի մեջ: Քրեական գործերից 2-ով վերացրել է վարույթը կարճելու և 2 քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումները: Մեկ քրեական գործով որոշում է կայացրել քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու վերաբերյալ: Հսկողություն իրականացրած քրեական գործերով տրվել է 13 գրավոր ցուցում: Ընթացք է տվել քաղաքացիների 61 դիմումի և 22 միջնորդության ու բողոքի, կատարել է 2 քաղաքացու ընդունելություն:

Նշված ժամանակահատվածում հսկողություն է իրականացրել 171 նյութերի նախապատրաստման նկատմամբ, որոնցից 1-ով կայացրել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու մասին որոշում: Տաթևիկ Ղուկասյանը հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու և ծառայողական քննություն անցկացնելու 4 միջնորդագիր է ներկայացրել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տարբեր հիմնարկների ղեկավարներին:

Տաթևիկ Ղուկասյանը տիրապետում է հանցագործությունների քննության, քննչական գործողությունների կատարման, մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության, մեղադրանքի պաշտպանության մեթոդիկային և տակտիկային: Տիրապետում է բնագավառը կարգավորող օրենսդրությանը: Օժտված է կազմակերպչական անհրաժեշտ ունակություններով, պարբերաբար ուսումնասիրում է օրենսդրությունն ու մասնագիտական գրականությունը, պարտաճանաչ է, կարգապահ և վայելում է գործընկերների հարգանքը:

ՀՀ դատախազության համակարգում աշխատելու ժամանակահատվածում Տաթևիկ Ղուկասյանը 2019 թվականին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով խրախուսվել է «Համագործակցության համար» մեդալով: Տաթևիկ Ղուկասյանը կարգապահական տույժեր չունի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Տաթևիկ Ղուկասյանի անձնական և մասնագիտական բարձր որակները, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 37-րդ հոդվածով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասի 2-րդ կետով և 5-րդ մասով, 50-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Անցկացնել Կոտայքի մարզի դատախազության ավագ դատախազ Տաթևիկ Ղուկասյանի արտահերթ ատեստավորում՝ վերջինիս «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու նպատակով:

Ա. ԴԱՎԹՅԱՆ